ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/9411/02/25 ք. Երևան
22 Սեպտեմբերի 2025թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ՎԱՆԻ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲ ընկերության՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «ՎԱՆԻ» ՍՊԸ-ի միջև 2020թ. հոկտեմբեր 21-ին կնքված ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 03.09.2025թ.-ին «ԱՐՄՍՎԻՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին ուղղված N 02/16.4/14550-2025 գրությամբ որակավորման ապահովման գումար 18.725.769 ՀՀ դրամ պահանջելը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 10.09.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «ՎԱՆԻ» ՍՊԸ-ի միջև 2020թ. հոկտեմբեր 21-ին կնքված ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 03.09.2025թ.-ին «ԱՐՄՍՎԻՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին ուղղված N 02/16.4/14550-2025 գրությամբ որակավորման ապահովման գումար 18.725.769 ՀՀ դրամ պահանջելը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 10.09.2025 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 2025 թվականի սեպտեմբերի 11-ին:

I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

II. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ կողմերի միջև 25.07.2025 թվականին կնքված համաձայնագրով 21.10.2020 թվականի թիվ ՀՀՔԿԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով պայմանագիրը լուծվել է, իսկ հայցով չի ակնկալվում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճի լուծում, Դատարանն արձանագրում է, որ գործի քննությունը պետք է իրականացնել ընդհանուր հայցային վարույթի կարգով:

III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ՎԱՆԻ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲ ընկերության՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «ՎԱՆԻ» ՍՊԸ-ի միջև 2020թ. հոկտեմբեր 21-ին կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 03.09.2025թ.-ին «ԱՐՄՍՎԻՍ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին ուղղված N 02/16.4/14550-2025 գրությամբ որակավորման ապահովման գումար 18.725.769 ՀՀ դրամ պահանջելը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. Որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց:
3. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանող կողմին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամայյան

ՎԱՎԵՐԱԳՐՎԱԾ Է
ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԴՈՒՆԱՄԱՅՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

cabinet.armlex.am